

Հաղորդագրություն

2022 թվականի հուլիսի 27-ին կայանալիք Դատավորների ընդհանուր ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրության վերաբերյալ

2022 թվականի հուլիսի 27-ին հրավիրված Դատավորների ընդհանուր ժողովին Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրությունը կազմակերպելու համար Դատական դեպարտամենտի ղեկավարի պարտականությունները կատարողի կողմից 2022 թվականի հունիսի 29-ին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 76-րդ հոդվածի 2-5-րդ մասերի կարգավորումների հաշվառմամբ, ծանուցագրեր են ուղարկվել Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թեկնածուի համար Սահմանադրությամբ և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված պահանջները բավարարող՝ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների և Սնանկության դատարանի 17 կին դատավորի:

Առաջին ատյանի դատարաններից և Սնանկության դատարանից ստացվել է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թեկնածուների 13 դիմում՝ իրենց անունները քվեաթերթիկում չներառելու մասին, ինչպես նաև՝ 4 դատավորի՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ:

Այդպիսով, 2022 թվականի հուլիսի 27-ին հրավիրված Դատավորների ընդհանուր ժողովին Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրության քվեաթերթիկում կներառվեն ներքոնշյալ 4 թեկնածուները.

Հ/հ	Դատավորի Անունը, ազգանունը, դատարանի անվանումը
1.	Թումանյան Անահիտ (Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան)
2.	Խաչատրյան Լիլիթ (Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան)
3.	Հովսեփյան Նաիրա (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան)
4.	Մազմանյան Գայանե (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան)